



Գ Լ Ո Բ Ո Ի Մ

Վ Ե Լ Ը Ո Ի Ծ Ա Կ Ա Ն Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Լ

«ՄԵԾ ՈՒԹՆՅԱԿԻ» ՎԵՀԱԺՈՂՈՎԸ
ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ «ԱՆՑՈՒՄԱՅԻՆ
ՓՈՒԼՈՒՄ»

Հուլիս, 2006

«ՆՈՐԱՎԱՆՔ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Գ Լ Ո Ւ Բ Ո Ւ Մ

Վերլուծական տեղեկագիր

Г Л О Б У С

Аналитический бюллетень

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

«Մեծ ութնյակի» վեհաժողովը և զարգացումները «անցումային փուլում»

«Ութնյակի» հանդիպման շուրջ	5
Իրանի միջուկային ծրագիրը «Մեծ ութնյակի» գագաթաժողովի օրակարգում և իսրայելա-լիբանանյան հակամարտությունը	9
Մերձավորարևելյան ճգնաժամ. երկու նպատակ	13
«Մեծ ութնյակի» 2006թ. գագաթաժողովը և «վրացական հարցը»	18
Աշխարհատնտեսական մրցակցություն	20
Գաղափարախոսական գործոնի վերարժեքավորում	23

Ռազմական տեսություն

В НАТО на российских танках: некоторые аспекты принятия военной доктрины и развития вооруженных сил Азербайджана	26
Корейские ракетные испытания	29

Հավելված

Информационные технологии	33
---------------------------------	----

«ՈՒԹՆՅԱԿԻ» ՀԱՆԴԻՊՄԱՆ ՇՈՒՐՁ

Մեծ տերությունների ղեկավարների վեհաժողովները երբեմն ընկալվում են որպես «համաշխարհային կառավարության» նիստեր, որոնք կանխորոշում են գլոբալ զարգացումները: Անշուշտ, նման մոտեցումը չափազանցություն է: Ավելին, փորձագետների հաշվարկների համաձայն՝ իրագործվում է ընդունված որոշումների ընդամենը մի մասը: Սակայն պետք է ընդունել, որ վեհաժողովների ընթացքում քննարկվում են ռազմավարական հրատապ խնդիրներ, ամրագրվում են կողմերի դիրքորոշումները, ձևավորվում են քաղաքական «խաղի կանոնները»:

Պատմական ակնարկ

Վեհաժողովներն ունեն ավելի քան 30-ամյա պատմություն, և պետերբուրգյան հանդիպումն էլ 32-րդն է: Առաջինը կայացել է 1975թ., երբ Ֆրանսիայի նախագահ Վալերի Ժիսկար դ'Էստենն իր նստավայր Ռամբույեի ամրոց հրավիրեց ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետության, Ճապոնիայի և Իտալիայի ղեկավարներին: Այսպիսով, վեհաժողովների կնքահայրը փայլուն քաղաքական գործիչ Ժիսկար դ'Էստենն է, որին ներկայումս ավելի շուտ ճանաչում են որպես Եվրասահմանադրության հեղինակի: Նախատեսվում էր, որ Ռամբույեում կողմերը ոչ պաշտոնական մակարդակով պիտի քննարկեն համաշխարհային տնտեսության վիճակը (որն, ի դեպ, նոր էր վերականգնվում 1973թ. Արաբ-իսրայելյան պատերազմից հետո նավթի գների կտրուկ բարձրացմանը հետևած ճգնաժամից): Վեհաժողովի մասնակիցներին հրապուրեցին հանդիպման գաղափարն ու ձևաչափը, և որոշում ընդունվեց կանոնավոր կերպով նման հանդիպումներ գումարել՝ ամեն տարի, մայիս-հուլիս ժամանակահատվածում: Արդեն հաջորդ՝ 1976թ. ԱՄՆ առաջարկությամբ այդ «գերակումբին» միացավ Կանադան՝ ձևավորելով հանրահայտ «յոթնյակը»:

1986թ., «պերեստրոյկայի» տարիներին, ԽՍՀՄ-ը, հանձին Միխայիլ Գորբաչովի, ջանում էր անդամագրվել «յոթնյակին»: Սակայն դա տեղի ունեցավ միայն 1992-ին՝ Սյունխենում, երբ որպես ոչ լիիրավ անդամ՝ վեհաժողով հրավիրվեց արդեն Ռուսաստանի նախագահ Բորիս Ելցինը: Միայն 1998-ին այդ տերությունը դարձավ հեղինակավոր ակումբի անդամ, և «յոթնյակը» վերածվեց «ութնյակի»: Այս տարվա հանդիպումն առաջինն է, որ տեղի է ունենում Ռուսաստանում և որում նախագահում է Վ.Պուտինը: Աշխատանքներին հրավիրվել են նաև ՄԱԿ-ի, Եվրախորհրդի, այլ միջազգային կազմակերպությունների, ինչպես նաև տվյալ հանդիպման ուշադրության կենտրոնում գտնվող երկրների ղեկավարներ:

Վերջին տարիներին գլոբալ քաղաքական և տնտեսական հարթությունում ի հայտ են եկել նոր դերակատարներ (օրինակ՝ Չինաստանը, որի տնտեսությունը, համաձայն տարբեր գնահատականների, գրավում է աշխարհում նվազագույնը 4-րդ տեղը): Այդ պատճառով «ութի» ձևաչափը որոշակիորեն կորցրել է իր ներկայացուցչականությունը: Մասնավորապես Թոնի Բլերն առաջարկում է վեհաժողովին անդամագրել Չինաստանը, Հնդկաստանը, Բրազիլիան, Մեքսիկան և Հարավաֆրիկյան Միությունը:

Կարգավիճակը և աշխատանքը

Վեհաժողովն առայսօր չունի միջազգային կազմակերպության կարգավիճակ, այն գրանցված չէ ՄԱԿ-ում և չունի մշտական գործող մարմիններ: Հանդիպմանը նախորդող ժամանակահատվածում տեղի են ունենում բազմաթիվ «ենթավեհաժողովներ»: Դրանցից մի քանիսը, օրինակ՝ անդամ երկրների արտաքին գործերի և ֆինանսների նախարարների հանդիպումները, գործնական նշանակություն ունեն, քանի որ նախապատրաստում են օրա-

կարգի հարցերը: Դրան գուգահեռ՝ մինչվեհաժողովային հավաքներ սկսել են գումարել նաև տարբեր հասարակական կազմակերպություններ, որոնք այդպիսով փորձում են ուշադրություն հրավիրել այս կամ այն հրատապ հարցի վրա: Պետերբուրգյան հանդիպման «ենթավեհաժողովներից» ամենաուշագրավը Մոսկվայում Ռուսական Ուղղափառ եկեղեցու նախաձեռնած տարբեր կրոնական դավանանքների ներկայացուցիչների համաժողովն էր, որի նպատակն էր վիճարկել «ունիվերսալ ժողովրդավարության» ամերիկյան դրույթը:

Վեհաժողովների պաշտոնական օրակարգը հաստատում է հյուրընկալող կողմը. այս տարի մասնակիցները քննարկել են էներգամոտանգության, ինֆեկցիոն հիվանդությունների կանխարգելման և կրթության խնդիրները: Մակայն ոչ պաշտոնական հանդիպումներում «ուրթյակի» ղեկավարները քննարկում են գլոբալ քաղաքականության, գաղափարախոսության և տնտեսության հրատապ խնդիրները:

ԱՄՆ-Եվրոպա, Ճապոնիա

Պետերբուրգյան վեհաժողովում, ի տարբերություն վերջին տարիների հանդիպումների, չափազանց մեծ է այն խնդիրների ցանկը, որոնցում կողմերի դիրքորոշումները սկզբունքորեն տարբերվում են: Դա արտահայտվում է նաև ԱՄՆ-ի և եվրոպական երկրների (Ֆրանսիա, Գերմանիա, Ռոմանո Պրոդիի իշխանության գալուց հետո՝ նաև Իտալիա) միջև տարաձայնություններով՝ Իրաքի, Իրանի միջուկային ծրագրի, Բուրայելի և «ՀԱՄԱԶ»-ի, «ՀԶԲՈԼԼԱՀ»-ի, Լիբանանի միջև ընթացող ռազմական գործողությունների շուրջ: Այսպիսով, կարելի է ամրագրել, որ արևմտյան տերությունների միջև եղած նախկին համերաշխությունը զգալիորեն խախտվել է:

Հատկանշական է, որ ԱՄՆ-Ճապոնիա հարաբերություններում, չնայած ընդհանուր շահերի առկայությանը (Հյուսիսային Կորեայի հիմնախնդիրը և Չինաստանի տարածաշրջանային գերակայության հետ կապված հարցերը), ներկայումս նկատվում է որոշակի լարվածություն:

Հակասությունները ԱՄՆ-ի և Ռուսաստանի միջև

Աշխարհաքաղաքական մրցակցությունը ԱՄՆ-ի և Ռուսաստանի միջև ընդունել է աննախադեպ սուր բնույթ, և դա առավել չափով արտահայտվում է Ուկրաինայում, որտեղ Մոսկվան ներկա փուլում խլել է նախաձեռնությունն արևմտյան կողմնորոշում ունեցող «նարնջագույններից»: Միննույն ժամանակ, քաղաքական ուժերի միջև անհանդուրժողականությունն այնքան մեծ է, որ Յուլյա Տիմոշենկոյի կազմակերպությունը, համաձայն ՋԼՄ-ի, փորձում է զինել Արևմտյան Ուկրաինայի իր համախոհներին. այդ նպատակով, մասնավորապես, տրամադրվել է \$12մլն: Բարդ իրադրություն է ձևավորվել Ուկրաինայի և Մոլդովայի կողմից շրջափակված Մերձդնեստրում (որտեղ սեպտեմբերի 17-ին սպասվում է անկախության հանրաքվեի անցկացում): Այդ չճանաչված հանրապետության հիմնախնդրի՝ Մոսկվայի համար ընդունելի լուծումները նույնպես ռուս-ուկրաինական հարաբերությունների հարթությունում են:

Իրադրությունը սրվել է նաև վրաց-օսական հակամարտության գոտում (վեհաժողովի նախօրեին Ցխինվալում տեղի ունեցած ահաբեկչություններին և ռուսաստանյան դիվանագետների նկատմամբ սադրանքներին Ռուսաստանը պատասխանեց Հյուսիսկովկասյան ռազմական օկրուգի և 58-րդ բանակի լայնածավալ զինավարժություններով): Պետք է նշել, որ «վրացական հարցը» տեղափոխվել է ռուս-ամերիկյան հարաբերությունների հարթություն, որտեղ կողմերը բավական անզիջում դիրքեր են գրավել (*տես կցված «Մեծ ութնյակի» 2006թ. գազաթաժողովը և «վրացական հարցը» հոդվածը*): Չնայած ԵԱՀԿ ձևաչափում թվացյալ համաձայնեցված քայլերին՝ ԱՄՆ-ի և Ռուսաստանի մոտեցումները ԼՂՀ խնդրում սկզբունքորեն տարբեր են:

Կողմերը խնդիրներ ունեն նաև տնտեսական ոլորտում, և Ռուսաստանին Առևտրի համաշխարհային կազմակերպություն ընդունելու շարունակական ձգձգումը (այդ հարցում ԱՄՆ-ի հետ համերաշխ գործում է Վրաստանը) դրա ապացույցն է: Տարաձայնություններ կան նաև էներգետիկայի ոլորտում, չնայած վեհաժողովի էներգետիկ անվտանգության վերա-

բերյալ ընդունված փաստաթղթում տեղ է գտել էներգակիրների տարանցումն ապահովող երկրների պատասխանատվության մասին բանաձևը: Դա համարվում է ռուսաստանյան դիվանագիտության հաղթանակ՝ հաշվի առնելով Ուկրաինայով անցնող խողովակաշարից գազի շրթման հետ կապված խնդիրները): Միևնույն ժամանակ, ԱՄՆ-ը և նրա դաշնակիցներն Արևելյան Եվրոպայում հետևողականորեն պայքարում են գազի ոլորտում Ռուսաստանի ունեցած գերակայության դեմ: Էներգետիկայի համատեքստում տեղին է նշել, որ Ռուսաստանը հիմնել է հումքային բորսա, որտեղ նավթի և ոսկու գները ձևավորվում են ռուսական ռուբլով, ինչը մարտահրավեր է այդ ոլորտում գլոբալ տնտեսական մենատեր հանդիսացող ԱՄՆ-ին: Հատկանշական է, որ նավթային բորսա է բացել նաև Իրանը, որտեղ առքը և վաճառքը կատարվում են եվրոյով, այլ ոչ թե դոլարով, ինչը նույնպես հարվածում է ռեգերվային արտարժույթ հանդիսացող դոլարի մենատիրական կարգավիճակին (*տես «Աշխարհատնտեսական մրցակցություն» հոդվածը*):

ԱՄՆ-ի և Ռուսաստանի տարաձայնությունները սկզբունքային բնույթ են կրում նաև գաղափարախոսական ոլորտում: Կողմերը ձևականորեն գտնվում են նույն գաղափարախոսական դաշտում, սակայն յուրովի են մեկնաբանում ժողովրդավարության դրույթները և անգամ այդ հասկացությունը: Համաձայն ամերիկյան մոտեցման՝ դեմոկրատիան ունիվերսալ բնույթ է կրում, և բոլոր ազգերը պետք է այն ընդունեն նույնաբար, իսկ ռուսական կողմն առաջ է քաշել «ինքնիշխան ժողովրդավարության» վերաբերյալ թեզը, որը ենթադրում է ազգային պետության գործոնի կարևորումը ժողովրդավարական համակարգում: Անշուշտ, ժողովրդավարության նման տարբեր մեկնաբանումները, ըստ էության, արտահայտում են կողմերի տարբեր աշխարհայացքներն ու ազգային շահերը (*տես «Գաղափարախոսական գործոնի վերարժեքավորում» հոդվածը*):

«Ժողովրդավարական սկզբունքներից» հեռանալու մասին դրույթը տեղ է գտել ռուսաստանյան քաղաքականության վերաբերյալ ԱՄՆ պաշտոնական փաստաթղթերում և, որպես հետևանք, այսօր Ռուսաստանը ենթարկվում է արևմտյան ՋԼՄ զանգվածային տեղեկատվական հարձակմանը: Հատկանշական է, որ մինչպետերբուրգյան վեհաժողովը սենատորներ Լիբերմանը և Մակքեյնը հարց էին բարձրացրել Ռուսաստանին «ուլթնյակից» վտարելու մասին: Այդ համատեքստում պատահական չէ, որ նախագահ Բուշը Մանկտ Պետերբուրգում առաջին հերթին հանդիպեց Պուտինի վարչակազմի նկատմամբ ընդդիմադիր հասարակական կազմակերպությունների հետ:

Հակասություններն ԱՄՆ-ի և ՇՀԿ անդամ երկրների միջև

Գլոբալ քաղաքական դերակատարների միջև հակասությունների մի մասն այսօր ընկած է ԱՄՆ-ՇՀԿ հարթությունում: Նշենք դրանցից մի քանիսը.

1. Միջին Ասիայում աճում է ՇՀԿ ազդեցությունը, և որպես հետևանք՝ շարունակվում է ԱՄՆ-ին տարածաշրջանից դուրս մղելու գործընթացը: Այդ համատեքստում հատկանշական է ոչ միայն Ուզբեկստանի անդամագրվելը Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությանը, այլև Կիրգիզիայի իշխանությունների գործողությունները: Օրերս Բիշքեքից վտարվեցին երկու ամերիկյան դիվանագետներ, իսկ Մանասի ամերիկյան ռազմաօդային բազայի շուրջ ընթացող բանակցություններում կիրգիզները գրավել են ավելի քան կոշտ դիրքորոշում (մասնավորապես՝ վարձակալման ներկայիս գինը \$2.7 մլն, բարձրացնել մինչև \$200 մլն):
2. Հյուսիսային Կորեան, չնայած ՄԱԿ-ի ընդունած փոքր-ինչ պայմանական պատժամիջոցներին (արգելվել է այդ պետություն ներկրել հրթիռամիջուկային տեխնոլոգիաներ), չի հրաժարվում իրագործել իր հրթիռամիջուկային ծրագիրը: ԱՄՆ-ի կոշտ դիրքորոշմանն այդ խնդրում Ռուսաստանը և Չինաստանը (որը, համաձայն որոշ փորձագետների, անուղղակիորեն օգտագործում է ԱՄՆ-ի դեմ կորեական միջուկահրթիռային «խաղաթուղթը») հակադրում են դիվանագիտական միջոցներով խնդրի լուծման իրենց մոտեցումները:
3. ՇՀԿ աջակցությունից օգտվում է նաև Իրանը: Այդ երկիրը, չնայած, այսպես կոչված, վեցյակի (ԱՄՆ, Ռուսաստան, Չինաստան, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա և Գերմանիա)

կողմից Վիեննայում մշակված և Իրանին առաջարկված (թվում է, թե շահավետ) ծրագրին, չի հրաժարվում իր միջուկային ծրագրից: Համաձայն փորձագետների, Իրանի ակտիվ մասնակցությունը Մերձավոր Արևելքում ընթացող իսրայելա-պաղեստինյան ռազմական գործողություններին կասկած չի հարուցում: Այսօր կան բոլոր նախադրյալները պնդելու, որ այդ երկիրը ձգտում է գերակայել տարածաշրջանում և դառնալ իսլամական աշխարհի առաջատարը (*տես «Իրանի միջուկային ծրագիրը «Մեծ ութնյակի» գազաթաժողովի համատեքստում և իսրայելա-լիբանանյան հակամարտությունը» և «Մերձավորարևելյան ճգնաժամ. երկու նպատակ» հոդվածները*):

Որոշ հետևություններ

Ներկայացված քաղաքական պատկերը վկայում է, որ այսօր աշխարհաքաղաքական հիմնական դերակատարների միջև տևական, երկարաժամկետ համաձայնությունների ձեռք բերումը խիստ դժվարեցված է, քանի որ նրանց միջև առկա են քաղաքական, տնտեսական և գաղափարախոսական բնույթի սկզբունքային հակասություններ: Կարելի է փաստել նաև, որ պետերբուրգյան վեհաժողովը թերևս ամրագրեց ԱՄՆ համաշխարհային բացարձակ գերակայության ավարտը և ՇՀԿ ձևաչափի երկրների գլոբալ հարթությունում հավակնությունների առկայությունը:

Միևնույն ժամանակ խոսել հստակ բազմաբևեռ համակարգի մասին փոքր ինչ վաղ է: Ներկա փուլը կրում է անցումային բնույթ և ԱՄՆ ռազմաքաղաքական (հատկապես՝ ռազմական) հզորությունը դեռևս գերազանցում է ամեն մի առանձին աշխարհաքաղաքական դերակատարի ռեսուրսները: Անցումային փուլում գրեթե բոլոր երկրները այս կամ այն չափով փորձում են հետամուտ լինել կոնկրետ իրադրություններից բխող կարճաժամկետ սեփական շահերին: Նման տրամաբանությունը հանգեցնում մի վիճակի, երբ քաղաքական դերակատարները կարող են միմյանց հետ միավորվել առանձին խնդիրների շուրջ և միևնույն ժամանակ պայքարել միմյանց դեմ այլ ոլորտներում:

***Գագիկ Հարությունյան
«Նորավանք» հիմնադրամ***

ԻՐԱՆԻ ՄԻԶՈՒԿԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ «ՄԵԾ ՈՒԹՆՅԱԿԻ»
ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎԻ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ և ԻՍՐԱՅԵԼԱ-ԼԻԲԱՆԱՆՅԱՆ
ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

Նախատեսվում էր, որ «Մեծ ութնյակի» Սանկտ Պետերբուրգի գազաթաժողովի ոչ պաշտոնական օրակարգի շրջանակներում քննարկվող հիմնական խնդիրներից մեկը Իրանի միջուկային ծրագիրն էր: Սակայն միայն առաջին հայացքից կարող է թվալ, թե Իրանի շուրջ զարգացումները և Թեհրանի արտաքին քաղաքականությունը կապված են միայն միջուկային ծրագրի հիմնախնդրի հետ:

Նշենք այն փուլային ընթացքը, որն առկա էր գազաթաժողովի՝ Իրանի հետ կապված քննարկումների նախաշեմին:

1. **Հունիսի մեկ:** Միջազգային «վեցյակը»՝ ի դեմս Գերմանիայի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի, ԱՄՆ-ի և Չինաստանի, Իրանին ներկայացրեց առաջարկությունների փաթեթ միջուկային ծրագրի զարգացման սահմանափակման մասին: «Վեցյակն» անուղղակիորեն հայտարարեց, որ կսպասի Իրանի պատասխանին մինչև Սանկտ Պետերբուրգի գազաթաժողովը:
2. **ՇՀԿ գազաթաժողով:** **Հունիսի տասնհինգ:** Իրանը բանակցություններ է վարում Ռուսաստանի և Չինաստանի հետ, որոնց արդյունքում խոստանում է լքջորեն քննարկել իրեն ներկայացված առաջարկությունները և պատասխան ներկայացնել մինչև հուլիսի կեսը, այսինքն՝ մինչև պետերբուրգյան գազաթաժողովը:
3. **Հունիսի քսանութին** Ռուսաստանի պաշտպանության նախարար Ս.Իվանովը, կանխատեսելով «ուկրաինական» և «իրանական» հիմնախնդիրների քննարկումը Սանկտ Պետերբուրգում, Ռուսաստանի համար ձեռնտու տարբերակով «կապում» է այս հարցերը՝ մեղադրելով Ուկրաինային Իրանին հրթիռներ վաճառելու մեջ:
4. **Հուլիսի ութին** Իրանի անվտանգության խորհրդի քարտուղար և միջուկային հարցերի գծով բանակցող Ալի Լարիջանին, որը պետք է Փարիզում ներկայացնեի Իրանի պատասխանը «վեցյակին»՝ վերջինիս արած առաջարկությունների կտրվածքով, հայտարարում է, որ հետաձգում է իր այցը Փարիզ, քանի որ իրանական հետախուզությունը տեղեկություն ունի, որ պատրաստվում է մահափորձ իր դեմ: Այսպիսով, Լարիջանին իր այցը հետաձգում է մինչև գազաթաժողովի նախօրեն և զրկում «վեցյակին» արագ արձագանքելու հնարավորությունից:
5. **Հուլիսի տասներեքին**, գրեթե անբացատրելի պատճառներով, լիբանանյան «Հզբոլլահը» հարձակվում է Իսրայելի վրա և հրահրում իսրայելա-լիբանանյան բախումներ: Նույն օրը երեկոյան Լարիջանին մերժում է «վեցյակի» առաջարկությունները և Փարիզից վերադառնում Թեհրան:
6. **Հուլիսի տասնհինգին** իրանական հեռուստատեսությունը հայտնում է, որ վերջին տասնհինգ տարվա ընթացքում Թեհրանը «Հզբոլլահին» է մատակարարել տասը հազարից ավելի հրթիռ՝ ուղղակիորեն մատնանշելով այն հնարավոր մասնակցությունը, որն ունի Թեհրանը Իսրայելի ոմբահարումներում:
7. **Հուլիսի տասնհինգին** Իսրայելի գլխավոր շտաբը հայտարարում է, որ իսրայելական նավերի վրա «Հզբոլլահի» բաց թողած հրթիռները պատրաստված են Իրանում: Իրանը չի հերքում այս տեղեկատվությունը:
8. **Սանկտ Պետերբուրգի գազաթաժողովն անցնում է Իրանի միջուկային ծրագրի քննարկումներով, որոնք, սակայն, հաշվի առնելով Մերձավոր Արևելքում սկսված պատերազ-**

մը, կարծես թե կրեցին երրորդական բնույթ՝ հրատապությամբ զիջելով նաև Հյուսիսային Կորեայի հիմնախնդրին:

Հաշվի առնելով այն, որ «Հզբոլլահ» կազմակերպությունը հովանավորվում և մասամբ ուղղորդվում է Իրանի կողմից, կարելի է ենթադրել, որ իսրայելա-լիբանանյան բախումը հրահրված կարող է լինել հենց Թեհրանի միջամտությամբ: Այսպիսի հրահրման հիմնական նպատակներ կարող են լինել.

ա) միջազգային հանրության, այդ թվում նաև Սանկտ Պետերբուրգի գազաթաժողովի մասնակիցների ուշադրության շեղում իրանական հիմնախնդրից,

բ) մատնանշել և ստուգել սեփական միջոցները՝ Իսրայելի և ԱՄՆ-ի հետ հնարավոր հակամարտության նախօրյակին,

գ) ստիպել միջազգային հանրությանը դիմել Իրանի միջնորդությանը «Հզբոլլահի» հետ բանակցությունների համար:

Սակայն, բացի վերը նշված ընթացիկ նպատակների լուծման անհրաժեշտությունից, Իրանի ակտիվացումը կարող է մատնանշել Թեհրանի պատրաստակամությունը երկարաժամկետ հակամարտության մեջ մտնել ԱՄՆ-ի և Իսրայելի հետ, որը, ինչպես բազմիցս նշել են Իրանի ղեկավարները, կարող է ընթանալ երեք ձևաչափով:

- **«Հզբոլլահին» ընդդեմ Իսրայելի.** - Իրան-ԱՄՆ հակամարտության հնարավոր մասնակից պետք է լինի հենց «Հզբոլլահը», որն ավելի, քան ցանկացած այլ արաբական քաղաքական կամ ահաբեկչական կազմակերպություն, կարող է կազմակերպված և նպատակաուղղված հարվածներ հասցնել Իսրայելին և ԱՄՆ քաղաքացիներին: «Հզբոլլահի» վերադարձն ահաբեկչական գործողություններին կարող է նաև հիմք հանդիսանալ Լիբանանում նոր քաղաքացիական պատերազմի սկսման համար: Այս պատերազմը կպայմանավորի համաշխարհային, այդ թվում նաև ամերիկյան ուժերի և ուշադրության վերադասավորում Լիբանանի ուղղությամբ:
- **«Նավթային զենք».** - Իրանի կողմից նավթի արտահանման սահմանափակումը խիստ անկայունություն կարող է հարուցել համաշխարհային նավթային շուկայում՝ այս վառելիքի գինը հասցնելով աննախադեպ բարձր մակարդակի: Նավթի արտահանման լիարժեք դադարն այսօր հնարավոր չէ նավթային գերեկամուտներ ստացող Իրանի համար: Սակայն այս տարվա սկզբից Իրանը ձեռնարկում է քայլեր, որոնք կարող են ապահովել նավթի բարձր գների պահպանումն առանց նավթի արտահանման սահմանափակման: Սա վերաբերում է, առաջին հերթին, Թեհրանի այն որոշմանը, որ Իրանն այսուհետև ինքնուրույն է կազմակերպելու իր նավթի վաճառքը և դա անելու է սեփական տարածքում՝ Քիշ կղզու ազատ տնտեսական գոտում: Բացի դրանից, Թեհրանը հայտարարել է, որ առքն ու վաճառքը տեղի են ունենալու ոչ թե դոլարով, այլ եվրոյով: Սա մեծ հարված կարող է հասցնել ԱՄՆ դոլարի դիրքերին միջազգային նավթային շուկայում: Բացի դրանից, Քիշում իրանցիները հնարավորություն կունենան կազմակերպել սեփական նավթային սև շուկա, որը թույլ կտա չհայտարարագրել վաճառվող նավթը և ստեղծել արհեստական դեֆիցիտ համաշխարհային շուկայում: Սա ևս մեկ խթան կլինի նավթի գների թռիչքի համար: Առաջին առքն ու վաճառքը Քիշի նավթային բորսայում նախատեսվում է սեպտեմբերին:
- **«Իրաքյան պատերազմ».** - Միակ ռեսուրսը, որն այսօր օգտագործվում է Իրանի կողմից սահմանափակ չափով, գուցե իրաքյան շիաների՝ ԱՄՆ նկատմամբ անհնազանդության հրահրումն է: Նման անհնազանդության հրահրման նպատակահարմարությունն ավելանում է ամեն ամիս՝ կապված այն ինտենսիվության հետ, որով ամերիկացիները ոչնչացնում են սուննի ծայրահեղականներին: «Ազատասերների» ճամբարի հետագա մաքրումը սուննիներից հնարավորություն կտա Իրանին հրահրել լայնածավալ շիական հակամերիկյան պայքար, առանց երկնչելու, որ այդ պայքարի առաջնամասում կհայտնվեն Սաուդյան Արաբիայի և «Ալ-Կաիդայի» կողմից հովանավորվող սուննի արմատականները: Այսօր ցուցադրելով որոշակի լոյալություն ամերիկացիների նկատ-

մամբ՝ իրաքյան շիաները խուսափում են ԱՄՆ զորքերի հետ բախումներից՝ դրանով իսկ Վաշինգտոնին զրկելով շիա ղեկավարների հետ այնպիսի գրեթե լեգիտիմ հաշվեհարդար տեսնելու հնարավորությունից, ինչպես դա տեղի է ունենում սուննիների հետ: Առայժմ շիաներն օժանդակում են ԱՄՆ զորքերին սուննիների պարագլուխների վերացման գործում: Այս քաղաքականության մաս կարող է կազմել այն հնարավոր օգնությունը, որն Իրանը ներկայացրել է ԱՄՆ-ին «Ալ-Կաիդայի» իրաքյան պարագլուխ Ազ-Ջարքաուիի ոչնչացման համար: Միևնույն ժամանակ, իրաքյան շիաները դեռ համարժեք չեն արձագանքում իրենց դեմ ուղղված ահաբեկչություններին՝ հասկանալով, որ դրանց հետևում կարող են կանգնած լինել ամերիկյան ուժերը, որոնք շահագրգռված են շիա-սուննի-քուրդ ձևաչափով քաղաքացիական բախումների և պատերազմի մեջ:

Ինչպես տեսնում ենք, Իրանը վերջին տարվա ընթացքում ակտիվորեն օգտագործում է իր հակաամերիկյան և հակախրայելական ռեսուրսները: Կարճաժամկետ հեռանկարի տեսանկյունից սա, իհարկե, կապված է միջուկային ծրագրի քննարկումների վրա ազդելու անհրաժեշտության հետ, սակայն սա նաև մատնանշում է Թեհրանի պատրաստականությունը՝ երկարաժամկետ հակամարտության մեջ մտնել ԱՄՆ-ի հետ: Այս հակամարտությունը դժվար թե վերածվի մաքուր պատերազմի: Սկսված պատերազմն ունենալու է տակտիկական և ռեսուրսային տեսք՝ նման, այսպես կոչված «փոքր ինտենսիվության» պատերազմներին, որոնք գործնականում բազմիցս կիրառվել են ԱՄՆ-ի կողմից:

Միևնույն ժամանակ, արտաքին քաղաքական գծի կարծրացումը և դրա հնարավոր հետևանք իրանա-ամերիկյան հակամարտությունն ավելի նշանակալի կդարձնեն իրանական այն քաղաքական ուժերի դիրքերը, որոնք հանդես են գալիս Ահմադինեժադի քաղաքական գծի դեմ: Ներկայումս, ըստ ոչ պաշտոնական տեղեկատվության, Իսլամական հեղափոխության պահապանների՝ տասներկու բարձրաստիճան հոգևորականներից բաղկացած խորհրդի անդամներից վեցը հանդես են գալիս Ահմադինեժադի հեռացման օգտին: Նախագահի հեռացման փորձ Իրանն արդեն ունի. քսանվեց տարի առաջ այս կերպ հեռացվեց նախագահ Բանիսադը: Սա նույնպես արդյունք էր իրանա-ամերիկյան հարաբերությունների հեռանկարների մասին նախագահի հատուկ կարծիքի: Տարբերությունն այն է, որ այն ժամանակ իրանական այաթոլաներին զրգրում էր նախագահի հանդուրժողականությունը, Ահմադինեժադի դեպքում՝ անհանդուրժողականությունը:

ԱՄՆ հնարավոր մասնակցությունն իսրայելա-լիբանանյան հակամարտության հրահրման մեջ

Միևնույն ժամանակ, չի կարելի բացառել, որ իսրայելա-լիբանանյան հակամարտությունը հրահրվել է ԱՄՆ կողմից: Դա կարող է լինել այն քաղաքական զարգացումների ռեակցիան, որոնք տեղի են ունեցել Մերձավոր Արևելքում վերջին 3 տարիների ընթացքում: Այս գործընթացների հիմնական տարրերից մեկն է ԱՄՆ նվազող վերահսկողությունը տարածաշրջանում: Իրաքի նոր կառավարությունը, որի կազմավորմամբ բազմիցս հետաքրքրություն են ցուցաբերել Վաշինգտոնում, արդեն իսկ փորձեր է կատարում սեփական ուժերով վերահսկել իրավիճակը երկրում: Սուննի ահաբեկիչների կողմից կազմակերպվող գործողությունները, որոնց մի մասի հետևում նույնպես կարող են կանգնած լինել ամերիկյան ուժերը, ամերիկյան «կառավարվող քառսի» քաղաքական գծի բնորոշ մասն են: Իսրայելա-լիբանանյան հակամարտությունն այս «քառսի» շրջանակները կարող է տարածել ողջ տարածաշրջանի վրա և չկապել ամերիկյան ռազմական ներկայությունն ու հակառակորդների ոչնչացման քաղաքականությունը միայն մեկ երկրում՝ Իրաքում ընթացող զարգացումների հետ:

Սա, իհարկե, չի նշանակում, թե Իսրայելը միայն ԱՄՆ «զենքն» է վերը նշված նպատակներին հասնելու ճանապարհին: Իսրայելը բավական հաջող օգտագործում է ԱՄՆ կողմից տրված շանսը՝ տարածաշրջանում իր դիրքերի ամրապնդման համար: Հարկ է նշել, որ վերջին 15 տարիների ընթացքում «Հզբոլլահը» կարողացել է դառնալ լեգիտիմ քաղաքական ուժ Լիբանանում և ստիպել միջազգային հանրությանն ընդունել իր այս կարգավիճակը: Իսկ Իսրայելի քաղաքականությունը «Հզբոլլահին» ստիպում է նորից անցնել ահաբեկչությունների

քաղաքականությանը, լեզվիտիմացնելով «Հզբուլլահի»՝ Իսրայելի քաղաքական և ֆիզիկական ոչնչացման գիծը:

Բոլոր պարագաներում պետք է փաստել, որ պատերազմում հետաքրքրված բազմաթիվ ուժերի առկայությունը Լիբանանում անհանգստություններին և սպալկայունությանը կարող է հաղորդել երկարաժամկետ բնույթ:

***Սևակ Մարուխանյան
«Նորավանք» հիմնադրամ***

ՄԵՐԶԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ ՃԳՆԱԺԱՄ. ԵՐԿՈՒ ՆՊԱՏԱԿ

Հուլիսի 11-ի լույս 12-ի գիշերը, իսրայելական սահմանապահ ուղեկալի վրա, Լիբանանում գործող շիական «Հզբոլլահ» կազմակերպության հատուկ նշանակության ջոկատի հարձակման արդյունքում սպանվեցին ութ հրեա զինվորներ, գերեվարվեցին երկուսը: Ընդհանուր թվով՝ ի հավելումն հունիսի 25-ին պաղեստինյան Գազայի շրջանին կից իսրայելական սահմանապահ ուղեկալից առևանգված կապրալ Գիլադ Շալիթի, արաբական գերության մեջ հայտնվեցին հրեա երեք զինծառայողներ:

Եթե Գազայի շրջանի նկատմամբ իսրայելական ռազմուժի իրականացրած գործողություններն ընկալվեցին ավելի շատ որպես ոստիկանական օպերացիա, ապա արդեն հուլիսի 12-ից Լիբանանի դեմ ձեռնարկված հարձակումը, իսկ հաջորդ օրվանից՝ նաև այդ երկրի ծովային ու օդային շրջափակումը մերձավորարևելյան ժամանակակից իրողություններին հարմարեցված պատերազմ էին¹:

Պետք է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ Իսրայելը ռազմական գործողություններ սկսեց մի երկրի դեմ, որը 2005թ. «մայրիների հեղափոխությամբ» զգալիորեն ազատվելով սիրիական ազդեցությունից՝ աստիճանաբար թեքվում էր դեպի Արևմուտք:

Իմիջային տեսանկյունից (որն արդեն իսկ արտահայտվում է տեղեկատվական դաշտում), հատկապես եվրոպական հանրությունում լուրջ խնդիրներ հարուցող Թել Ավիվի նման ակցիան կարող է ևս մեկ փաստարկ հանդիսանալ, որ իսրայելական Գլխավոր սպայակույտը հենց ի սկզբանե ուներ ավելի ընդգրկուն օրակարգ: Հակառակ պարագայում, Թել Ավիվի համար, իմիջայինից զատ (օրինակ, Լիբանանի խաղաղ բնակչության շրջանում զոհերի աճող թվաքանակից խուսափելու իմաստով), քաղաքական, տնտեսական և անգամ ռազմատեխնիկական առումներով ավելի արդյունավետ կլինեին սահմանափակվել կետային հատուկ գործողություններով²:

Հետևաբար, անցած օրերին իսրայելական ռազմուժի գլխավոր նպատակը ոչ թե գերեվարված հրեա զինվորներին ազատելն էր (շանսերն, ըստ ամենայնի, քիչ էին), այլ, լայնածավալ պատերազմի հաշվարկով, Իսրայելին կից տարածքներում մարտավարական ավելի նպատավոր դիրքեր զբաղեցնելը, այդ թվում՝ նախահարձակ գործողությունների նպատակով:

Իրանական գործոն

Իսրայելի դեմ ռազմական գործողություններ սկսելու որոշումը չէր կարող կայացվել նման կարողություններից զուրկ «Հզբոլլահ» կամ «Համաս» կազմակերպություններում: Հետևաբար, հարցը պետք է դիտարկել ավելի լայն՝ մերձավորարևելյան զարգացումների համատեքստում: Նման պարագայում միակ ուժը, որը ներկայումս կարող է և որին ձեռնտու է ռազմական գործողությունների մեջ ներքաշել Իսրայելին, Իրանն է:

Ռազմական նպատակներ

Հուլիսի 13-ից «Հզբոլլահն» Իսրայելի դեմ առաջին անգամ սկսեց կիրառել նոր տիպի հրթիռներ, որոնք կարողացան թիրախներ խոցել իսրայելա-լիբանանյան սահմանից մոտ 45կմ հեռավորության վրա գտնվող՝ հրեական պետության ամենամեծ նավահանգիստը և

¹ Հուլիսի 16-ից սկսած մի շարք երկրների կողմից իրենց քաղաքացիների Էվակուացումը Լիբանանից և Բեյրութում գտնվող գերազանցապես արևմտյան դիվանագիտական ներկայացուցչությունների էական կրճատումը խոսում էր միայն առաջիկայում ռազմական գործողությունների թեժացման մասին:

² Գազայի շրջանում, Հորդանան գետի արևմտյան ափին կամ Լիբանանի հարավային հատվածում արաբների ենթակայության ներքո գտնվող ռազմատեխնիկական կարողությունների ներկա մակարդակը Իսրայելին լիովին հնարավորություն է տալիս սահմանափակվել հատուկ գործողություններով՝ հրեա զինվորներին ազատելու կամ նոր գերեվարված բարձրաստիճան պաղեստինցիների հետ նրանց փոխանակելու համար:

միաժամանակ բնակչության թվով երրորդը (մոտ 600 հազ. մարդ) հանդիսացող Հայֆա քաղաքում: Մինչ այդ համարվում էր, որ «Հզբոլլահի» հրթիռների առավելագույն հեռահարությունը կարող է կազմել 20կմ:

«Հզբոլլահի» մատուցմամբ, Իսրայելի դեմ օգտագործվում են սեփական արտադրության «Raad-1» (արաբ.՝ «Որոտ-1»), «Raad-2» և «Raad-3» անվամբ «Երկիր-երկիր» տեսակի հրթիռներ: Սակայն իսրայելա-ամերիկյան աղբյուրների տվյալներով՝ շիական կազմակերպության տրամադրության տակ գտնվում են գերազանցապես իրանական արտադրության¹ «Fajr-3» (արաբ.՝ «Արևածագ-3») և «Fajr-5» հրթիռներ: Իսրայելի ռազմական հետախուզության հրապարակած տեղեկության համաձայն, «Հզբոլլահի» զինանոցում առկա են նաև մոտ 30 հատ «Zelzal-2» (արաբ.՝ «Երկրաշարժ-2») ավելի քան 450կգ-ոց մարտագլխիկներ ունեցող հրթիռներ (նույնպես իրանական արտադրության): Վերջիններս Լիբանանի մի զգալի մասից կարող են հարվածել հրեական պետության մայրաքաղաք Թել Ավիվին:

<i>«Հզբոլլահ» կազմակերպության հրթիռային զինանոցը</i>	
հրթիռ	հեռահարություն
«Raad-1»/«Fajr-3»	մոտ 45կմ
«Raad-2»/«Fajr-4»	ենթադրաբար 58-60կմ
«Raad-3»/«Fajr-5»	մոտ 72կմ
«Zelzal-1»	մոտ 125կմ
«Zelzal-2»	գրեթե 210կմ
Տվյալները ներկայացված են գերազանցապես իսրայելական ու ամերիկյան աղբյուրների հիման վրա:	

Հուլիսի 15-ին Միջերկրական ծովում՝ Բեյրութի դիմաց, ասփից արձակված հրթիռից խփվեց Լիբանանի մայրաքաղաքի ծովային շրջափակմանը մասնակից իսրայելական «Saar-5» դասի ժամանակակից կորվետր²: Երկու օր անց, լիբանանյան ՁԼՄ-ի տարածած տեղեկության համաձայն, Բեյրութի օդային տարածքում խփվեց նաև իսրայելական «F-16» կործանիչը:

Փաստորեն, «Հզբոլլահի» տրամադրության տակ եղած հրթիռային նոր զինանոցը ներկա պատերազմի ամենաեական առանձնահատկություններից է:

Սակայն քիչ հավանական է, որ «Հզբոլլահին» իր տրամադրության տակ ունենա գիտատեխնիկական ու նյութական այնպիսի բազա, որը նրան թույլ կտա հաջողությամբ զբաղվել նման կարգի հրթիռների արտադրությամբ կամ կատարելագործմամբ: Խնդիր, որը, թերևս, անլուծելի է անգամ Լիբանանի պաշտպանական գերատեսչության համար:

Բացի այդ, սկսած «Raad-3»/«Fajr-5»-ից, «Հզբոլլահի» միջին հեռահարության հասնող հրթիռների հատկապես հարվածի ճշգրտության հարցը կարող է լուծվել միայն փորձարկումների միջոցով: Լիբանանի պես փոքր երկրում (ՀՀ և ԼՂՀ միացյալ տարածքից Լիբանանը փոքր է չորս անգամ՝ 10.400 քառ/կմ) «Հզբոլլահը» չէր կարող գնալ այդ կարգի փորձարկումների, այդ թվում՝ գաղտնիության պահպանման պատճառով:

Հետևաբար, շիական կազմակերպությանը նման կարգի հրթիռներ մատակարարելով և իրական ռազմական գործողություններում դրանք կիրառելով՝ Իրանի Գլխավոր սպայակույտը, թերևս, առաջին հերթին նպատակ ունի փորձարկել Իսրայելի հակահրթիռային ու հակաօդային պաշտպանության համակարգերը³: Այդ խնդիրը հատկապես արդիական է Իրանի միջուկային ծրագրի շուրջ առկա լարված իրավիճակի համատեքստում:

Ընդհանուր առմամբ, բոլոր հիմքերը կան ենթադրելու, որ մերձավորարևելյան այս պատերազմի միջոցով իրանական ռազմական գերատեսչությունը կարող է մողելավորել տարածաշրջանի առանձնահատկություններին բնորոշ պատերազմների իրեն ձեռնտու

¹ Իսրայելական աղբյուրների մի մասի տվյալներով՝ «Հզբոլլահի» հրթիռները կարող են լինել սիրիական արտադրության:
² Ըստ հրեական աղբյուրների՝ ռազմանավը խփվել է ռադարային ուղենիշով աշխատող իրանական «C-802» 120կմ-ոց հեռահարություն ունեցող հրթիռով: Նույն աղբյուրների ներկայացմամբ, 1990-ական թթ. սկզբներին այդ հրթիռները Թեհրանը գնել էր Չինաստանից, իսկ հետագայում արդիականացրել Հյուսիսային Կորեայի օգնությամբ:
³ Պատահական չէ, որ հուլիսի 15-ին հայտնի դարձավ, թե իսրայելական հրամանատարությունը Հայֆայի շրջակայքում տեղադրել է հակաօդային ու հակահրթիռային պաշտպանության համար նախատեսված ամերիկյան «Patriot Advanced Capability-3» համալիր:

սցենարներ: Այդ թվում՝ հաշվի առնելով Իրանի դեմ ԱՄՆ-ի ու նրա դաշնակիցների կողմից ռազմական գործողություններ սկսելու հավանականությունը:

Քաղաքական նպատակներ

Հունիսի 16-ին հայտնի դարձավ, որ նախորդ օրը Դամասկոսում գտնվող Իրանի պաշտպանության նախարար Մոստաֆա Մոհամադ Նաջարն իր սիրիացի գործընկերոջ՝ Հասան Թուրքմանիի հետ կնքել է «Ռազմական համագործակցության և ընդհանուր սպառնալիքներին դիմագրավելու մասին» համաձայնագիրը: Թեև արևմտյան աղբյուրները շտապեցին հայտարարել իրանա-սիրիական պակտի մասին, սակայն իրականում Բաշար Ասադի վարչակազմը ներկայումս իրեն չի կարող թույլ տալ բացահայտ կերպով ռազմավարական բնույթի նման պայմանավորվածության գնալ Թեհրանի հետ:

Հետևաբար, հունիսի 15-ի համաձայնագիրն, առաջին հերթին, ի ցույց է դնում Իրանի նպատակը՝ ընդլայնել սեփական քաղաքական ազդեցությունը Մերձավոր Արևելքի այդ հատվածում՝ հաշվի առնելով Իրաքում գտնվող ամերիկացիների ու Իսրայելի գործոնները:

Իսրայելի ռազմական գործողությունները Լիբանանի ու Պաղեստինյան Ինքնավարության դեմ միայն նպաստում են, որ այդ երկու երկրներում ընդլայնվեն հակաարևմտյան ուժերի քաղաքական ազդեցությունները: Դա նշանակում է, որ Արևմուտքի մարդիկ համարվող Պաղեստինի նախագահ Մահմուդ Աբասի ու Լիբանանի վարչապետ Ֆաուդ ա-Սինյորայի հրաժարականները, թերևս, ժամանակի հարց են¹: Այդ ամենից, առաջին հերթին, կարող է շահել Իրանը:

Հետևություններ

Հուլիսի 11-ին Բրյուսելում առանց որևէ արդյունքի ավարտվեցին Եվրամիության Միասնական արտաքին ու անվտանգության քաղաքականության հարցերով բարձր ներկայացուցիչ Խավիեր Սոլանայի ու Իրանի Ազգային անվտանգության բարձրագույն խորհրդի քարտուղար Ալի Լարիջանիի բանակցությունները: Իրանական կողմը հրաժարվեց մինչև «Մեծ ութնյակի» պետերբուրգյան գագաթաժողով պաշտոնապես պատասխանել դեռևս հունիսի 6-ին «վեցյակի» կողմից Թեհրանին ներկայացված առաջարկությունների փաթեթին²:

Այդ կապակցությամբ հաջորդ օրը՝ հուլիսի 12-ին, Փարիզում տեղի ունեցած «վեցյակի» (Միացյալ Նահանգներ, Ռուսաստան, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Չինաստան, Գերմանիա) արտգործնախարարների համատեղ նիստում որոշում կայացվեց իրանական հարցը փոխանցել ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդ:

Իսրայելին ռազմական գործողությունների մեջ ներքաշելու Թեհրանի հաշվարկն, առաջին հերթին, պետք է կապել «Մեծ ութնյակին» ընդառաջ իրանական հարցի շուրջ ընթացող զարգացումների հետ: Ի ցույց դնելով տարածաշրջանում իր հնարավորությունները՝ Իրանն այդ կերպ ոչ միայն հիշեցրեց միջուկային զենք ունենալու մասին, այլև փորձ արեց ապահովագրվել «Մեծ ութնյակում» իրեն վերաբերող հավանական պայմանավորվածությունից: Պատահական չէ, որ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում իրանական հարցի քննարկումը կայանալու է պետերբուրգյան գագաթաժողովից հետո³:

Մյուս կողմից՝ Թեհրանի նման նախաձեռնությունը նախևառաջ ԱՄՆ-ի դեմ կիրառվող իրանական շեղող մարտավարության մասն է կազմում: Վերջինիս նպատակն է՝ փորձել շեղել Վաշինգտոնի ու նրա դաշնակիցների ուշադրությունը Իրանի միջուկային ծրագրի հարցից:

Մարտավարությունն ունի համալիր բնույթ.

¹ Հուլիսի 12-ին հայտնի դարձավ, որ Պաղեստինի Ինքնավարության նախագահ Մահմուդ Աբասը հայտարարել է իր հավանական հրաժարականի մասին:

² Մինչդեռ հունիսի 29-ին Մոսկվայում հավաքված «Մեծ ութնյակի» արտաքին գործերի նախարարներն իրենց համատեղ հայտարարությամբ կոչ էին արել Իրանին հուլիսի 5-ին Բրյուսելում կայանալիք Սոլանա-Լարիջանի հանդիպման ժամանակ պաշտոնական պատասխան տալ Թեհրանին ներկայացված «վեցյակի» առաջարկությունների փաթեթին:

³ Այժմ է գարնամ այն հանգամանքը, որ «Հզորլիսի» կողմից իսրայելական զինվորների առևանգումը տեղի ունեցավ հուլիսի 11-ին Բրյուսելում կայացած Սոլանա-Լարիջանի անհաջող բանակցություններից անմիջապես հետո՝ հուլիսի 11-ի լույս 12-ի առավոտյան:

- չնայած հունիսի 8-ին վերջնականապես ավարտվեց իրաքյան կառավարության ձևավորումը, սակայն հունիսի երկրորդ կեսից վերստին սրվեց սուսնիների ու շիաների հակամարտությունը¹,
- հունիսի 25-ին իսրայելական բանակի կապրալի առևանգմամբ մեկնարկեց մերձավորարևելյան նոր պատերազմը,
- հուլիսի սկզբից աննախադեպ կերպով սրվեց իրավիճակն Աֆղանստանում²,
- հուլիսի 14-ին Պակիստանի Կարաչի քաղաքում սպանվեց այդ երկրի մեծաթիվ շիա համայնքի հոգևոր առաջնորդ Ալամա Հասան Թուրաբին, ինչի արդյունքում վերստին սրվեցին պակիստանյան սուսնիների ու շիաների հակասությունները:

Մերձավորարևելյան նոր պատերազմն ուղղված է նաև Իրանի տարածաշրջանային մրցակիցների դիրքերի թուլացմանը: Պատահական չէ, որ Սաուդյան Արաբիան հանդես է եկել «Հզորլլահի» և Իրանի քննադատությամբ: Իսրայելա-լիբանանյան պատերազմն ի վիճակի է միայն արմատականացնել արաբական հասարակությունները, ինչն ուղղակի նպաստում է Արևմուտքի հետ համեմատաբար լավ հարաբերությունների մեջ գտնվող Սուադյան Արաբիայի, Եգիպտոսի և Հորդանանի վերնախավերի դիրքերի թուլացմանն իրենց իսկ երկրներում, հետևաբար՝ տարածաշրջանային քաղաքականության մեջ:

Եվ վերջապես, առկա իրավիճակն ընդհանուր առմամբ տեղավորվում է «Մեծ ութնյակից» առաջ միջազգային համակարգի ճգնաժամային կետերում տեղի ունեցած ակտիվացման տրամաբանության մեջ:

Ամերիկա-իսրայելական գործոն

Հուլիսի 19-ի առավոտյան իսրայելական բանակի ցամաքային ուժերը ներխուժեցին Լիբանան: Այդ հանգամանքը նշանակում է, որ իսրայելական օդուժի գործողությունները բավարար չէին էականորեն կամ ամբողջովին ոչնչացնելու «Հզորլլահի» ռազմական ենթակառուցվածքը: Մյուս կողմից՝ լուրջ արդյունքների հասնելու համար իսրայելական ցամաքային ուժերը, թերևս, ստիպված կլինեն առնվազն ամիսների կտրվածքով հաստատվել Լիբանանի (ենթադրաբար) հարավային հատվածում: Քանի որ հրեական ցամաքային ռազմուժի, օրինակ, մեկշաբաթյա գործողությունները և նահանջը դեպի Իսրայել (ինչպես կանխատեսում են արևմտյան շատ լրատվամիջոցներ) չեն կարող երաշխավորել «Հզորլլահի» ոչնչացումը:

Քիչ հավանական է, որ առանց Վաշինգտոնի համաձայնության՝ Թեյ Ավիվը ձեռնարկեր նման գործողություն: Հետևաբար, միակ հարցը, որը նոր տարր է մտցնում մերձավորարևելյան ճգնաժամի մեջ, հետևյալն է. ի՞նչ նպատակ կարող է հետապնդել ԱՄՆ-ը՝ նպաստելով Մահմուդ Աբասի ու Ֆաուդ ա-Սինյորայի վարչակազմերի տապալմանը³: Վերջինս ուղղակի հակասում է անցած ժամանակահատվածում Վաշինգտոնի մերձավորարևելյան քաղաքականության տրամաբանությանը:

Այդ առումով պատահական չէ, որ Սիրիայի ու Իրանի նկատմամբ վերջին մեկուկես տարում կիրառված համատեղ ճնշումներից հետո Արևմուտքում տեսակետները կրկին բաժանվեցին մերձավորարևելյան քաղաքականության առնչությամբ⁴:

Ամերիկյան քաղաքականության մեջ այդ կարգի փոփոխությունների պատճառը, թերևս, նոր նպատակների ի հայտ գալն է: Այդ նպատակները կարող են լինել Սիրիան կամ Իրանը, իսկ երկարատև հեռանկարում՝ երկուսն էլ:

¹ Ուշադրություն է գրավում այն հանգամանքը, որ ներկայումս իրաքյան սուսնի շատ քաղաքական ուժեր սկսել են ընդդիմանալ Իրաքից ամերիկյան ռազմուժի շուտափույթ դուրսբերմանը:

² Պենտագոնի ղեկավար Դոնալդ Ռամսֆելդը ստիպված էր հուլիսի 9-ին չնախատեսված այց կատարել Քաբուլ: Հաջորդ օրը հրապարակվեց Լոնդոնի որոշումը՝ 900 զինվորներով ավելացնել իր աֆղանական խմբավորումը՝ հասցնելով 4.500 մարտիկի: Եվ վերջապես, հուլիսի 18-ին հայտնի դարձավ, որ թալիբները 16-օրյա մարտերից հետո կարողացել են ի վերջո գրավել Աֆղանստանի հարավային չեղմանը նահանգի Գամսեր շրջանը:

³ Նույն հարցի մեջ է մտնում նաև հուլիսի 15-ին այն տեղեկության հրապարակումը, թե Պենտագոնը ԱՄՆ Կոնգրեսի համաձայնությունն է հայցել իսրայելական օդուժին \$210 մլն-ի ավիավառելանյութ վաճառելու համար:

⁴ Ամենականառում ֆրանս-ամերիկյան հակասություններն են:

Սակայն, եթե ներկա ժամանակահատվածում իրանական հարցի կտրուկ ակտիվացումը կարծես թե ձեռնտու չէ Վաշինգտոնին՝ ներքաղաքական հաշվարկների և նավթի գների շեշտակի բարձրացմամբ պայմանավորված տնտեսական վնասների պատճառով, ապա այլ է Սիրիայի հարցը:

Իսրայելի սիրիական հաջող կամպանիան կարող է լուծել մի քանի խնդիր.

- նվազեցնել կամ ընդհանրապես վերացնել Իրանի ռազմաքաղաքական աճող ազդեցությունը Մերձավոր Արևելքի այդ հատվածում, որը Թեյ Ավիվի համար արդեն հասել է վտանգավոր մակարդակի,
- քաղաքական առումով այդ հանգամանքը նշանակում է իրանական դիրքերի թուլացում ոչ միայն Մերձավոր Արևելքում, այլև ողջ մահմեդական աշխարհում, քանի որ ըստ հունիսի 15-ի իրանա-սիրիական համաձայնագրի՝ Թեհրանը, փաստորեն, ստանձնել է Դամասկոսի անվտանգության ապահովումը,
- Սիրիայի դեմ ուղղված իսրայելական ռազմական կամպանիան կարող է ունենալ նաև զուտ ռազմական նպատակներ՝ չեզոքացնել այդ երկրում ստեղծվող իրանական ռազմական (առաջին հերթին՝ հրթիռային) ենթակառուցվածքը, որն անհրաժեշտության դեպքում կարող է ուղղվել Իսրայելի ու Իրաքում տեղակայված ամերիկյան զորքերի դեմ,
- առաջին հերթին ամերիկյան հասարակության ուշադրությունը շեղել Բուշ-կրտսերի վարչակազմի համար անբարենպաստ զարգացումներով լի իրաքյան խնդրից, ինչն էլ կարող է լուրջ նշանակություն ունենալ ԱՄՆ-ում կայանալիք առաջիկա համապետական ընտրություններում:

Գալիք օրերին Սիրիայի հրապարակային դիրքորոշումը իսրայելա-լիբանանյան պատերազմի առնչությամբ, թերևս, կարող է ցուցիչի դեր ծառայել:

*Մարգիս Հարությունյան
«Նորավանք» հիմնադրամ*

«ՄԵԾ ՈՒԹՆՅԱԿԻ» 2006թ. ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎԸ ԵՎ «ՎՐԱՑԱԿԱՆ ՀԱՐՑԸ»

Վերջին մեկ ամսվա ընթացքում վրացական դիվանագիտությունը գործադրեց մեծագույն ջանքեր՝ ձգտելով ստանալ Արևմուտքի և, առաջին հերթին, ԱՄՆ-ի լայնածավալ աջակցությունը Ռուսաստանի հետ հակամարտությունում և հող նախապատրաստել Վրաստանի հետ առնչվող խնդիրների դրական լուծման համար: Նպատակն էր հասնել նրան, որ «Մեծ ութնյակի» պետերբուրգյան գագաթաժողովի պաշտոնական փաստաթղթերից մեկում ամրագրվեն Վրաստանի համար բարենպաստ ձևակերպումներ, ինչը վերջնականորեն կազդարարեր վրացական հարցի՝ որպես ժամանակակից միջազգային հարաբերությունների բաղկացուցիչ մաս կազմող խնդրի, առաջացումը: Մակայն դա տեղի չունեցավ:

1. «Վրացական հարցի» բնութագիրը՝ համաձայն վրացական մոտեցման

«Վրացական հարցը» ներառում է հետևյալ չորս բաղադրիչները.

1. Աբխազիայի և Հարավային Օսիայի հակամարտությունների կարգավորում՝ համաձայն Վրաստանի մոտեցումների: Ռուսաստանի քաղաքական ազդեցության չեզոքացում:
2. Ռուսաստանի հետ առևտրատնտեսական հարաբերությունների կարգավորում՝ Վրաստանի կենսական շահերի հարգման հիման վրա:
3. Ռուսաստանի հետ հարաբերությունների կարգավորում էներգետիկայի բնագավառում՝ նրանից կախվածության նշանակալի կրճատման հիման վրա:
4. Այդ կետերին պիտի ավելացնել Վրաստանի՝ ՆԱՏՕ-ին անդամակցելու ձգտումը, հաղթահարելով Ռուսաստանի կոշտ բացասական մոտեցումն այդ առնչությամբ:

Ըստ էության, «վրացական հարցը» Վրաստանի տարածքային ամբողջականության վերականգնման և ինքնուրույն քաղաքականություն անցկացնելու հնարավորություն ապահովելու հարցն է:

Աշխարհաքաղաքական տեսանկյունից, «վրացական հարցի» լուծումը հանգում է ներկայիս *status quo*-ի փոփոխմանը՝ ի վնաս Ռուսաստանի: Այդ պատճառով Վրաստանը դրա լուծումը կապում է Արևմուտքի և, առաջին հերթին, ԱՄՆ-ի անմիջական աջակցության հետ:

Առաջ քաշելով «վրացական հարցը» Վրաստանը ձգտում է փոխարինել աբխազական ու հարավօսական հակամարտությունների կարգավորման միջազգային խնդիրը, որն, առաջին հերթին, հետաքրքրում է Վրաստանին և պակաս չափով՝ Արևմուտքին, ավելի մեծ խնդրով, որը քաղաքական ու աշխարհաքաղաքական տեսանկյունից ավելի սերտ աղերսներ ունի Արևմուտքի շահերին: Դա ավելի առարկայական է դարձնում վերջինիս աջակցությունը: Այդպիսով վրացական դիվանագիտությունը ձգտում է ուժեղացնել իր դիրքերը Ռուսաստանի հետ հակամարտությունում:

Վերը նշվածից հետևում է.

1. «Վրացական հարցի» լուծումը Ռուսաստանի ձեռքում է:
2. Վրաստանը ձգտում է հասնել «վրացական հարցի» ամրագրմանը միջազգային փաստաթղթերում, օրինակ՝ «Մեծ ութնյակի» գագաթաժողովի որոշումներում, ինչը որոշակի երաշխիք է, որ Ռուսաստանն ավելի կոշտ միջոցներ չի կիրառի իր դեմ:
3. Վրաստանը ձգտում է սրել հակամարտությունը Ռուսաստանի հետ, ինչը, համաձայն վրացի քաղաքագետների, կուժեղացնի «վրացական հարցը» հոգուտ Վրաստանի լուծելու նրա հնարավորությունները:

2. Ձևավորման գործընթացը

Հունիսի 13-ին կայացած Վ.Պուտին – Մ.Սահակաշվիլի անարդյունք հանդիպումից հետո վրացական դիվանագիտությունը մեծագույն ջանքեր գործադրեց՝ ձգտելով ստանալ Արևմուտքի և, առաջին հերթին, ԱՄՆ-ի լայնածավալ աջակցությունը Ռուսաստանի հետ հակա-

մարտությունում և հող նախապատրաստել նրա հետ առնչվող խնդիրների դրական լուծման համար: Մ.Սահակաշվիլու ԱՄՆ կատարած հուլիսյան այցի ընթացքում նրան հաջողվեց ապահովել նախագահ Ջ.Բուշի անվերապահ աջակցությունը, ինչը գնահատվեց որպես վրացական դիվանագիտության մեծ հաղթանակ: Մասնավորապես՝ Բուշը համաձայնվեց Պուտինի հետ հանդիպման ընթացքում բարձրացնել «վրացական հարցը» (Մ.Սեստանովիչ): Այդ այցից հետո Վրաստանը համոզված էր, որ կհաջողվի ամրագրել Արևմուտքի աջակցությունը «Մեծ ութնյակի» 2006թ. գագաթաժողովում, ինչը կնշանակեր, որ «վրացական հարցը» հանդես է գալիս որպես միջազգային դիվանագիտության հարց: Այդ գործընթացն ուղեկցվում էր վրացական դիվանագիտության՝ Ռուսաստանի հետ հարաբերություններում լարվածությունն ավելի ուժեղացնելու ջանքերով, ինչն արտահայտվեց, օրինակ, Աբխազիայից և Հարավային Օսիայից ռուսական խաղաղապահ ուժերի դուրսբերման վերաբերյալ Վրաստանի խորհրդարանի նախապատրաստվող նիստի մասին հաղորդագրություններով:

3. «Վրացական հարցը» «Մեծ ութնյակի» գագաթաժողովի աշխատանքի օրերին

Գագաթաժողովի նախաշեմին և սկզբնական փուլում Վրաստանը կատարեց գործողություններ, որոնք նպատակ ունեին ավելի սրելու հակամարտությունը Ռուսաստանի հետ (ԱՀԿ-ին (Առևտրի համաշխարհային կազմակերպություն) Ռուսաստանի անդամակցության վերաբերյալ նախնական համաձայնության հետևանքում, լարվածության սրում օսական հակամարտության գոտում):

ԱՄՆ-ը, իր հերթին, կատարեց խոստումը. Պուտինի հետ հանդիպման ժամանակ Բուշը «վրացական հարցը» դարձրեց քննարկման հիմնական հարցերից մեկը: Այն քննարկվեց նաև հուլիսի 16-ի լիազումար նիստի ընթացքում (Թ.Բլեր): Սակայն վերջնական փաստաթղթերում այն արտացոլում չգտավ:

Պատճառները.

1. Պուտինի հետևողական դիրքորոշումը գագաթաժողովում (Թ.Բլեր):
2. Ռուսական դիվանագիտության որդեգրած կոշտ դիրքորոշումը վերջին ամսվա ընթացքում (Իվանով, Լավրով), ինչը ստիպեց ԱՄՆ-ին ավելի լուրջ գնահատել հակամարտությունների գոտում ռազմական գործողությունների վերսկսման վտանգը և վերջիվերջո մեղմացնել իր մոտեցումները (ՎեստԻստ ինստիտուտ):
3. Մերձավոր Արևելքում իրադրության կտրուկ սրումը:

Այսպիսով, վրացական դիվանագիտությունը չհասավ իր նպատակին. «վրացական հարցը» չդարձավ միջազգային հարց:

Հեռանկարներ

Հուլիսի 18-ին Վրաստանի խորհրդարանն ընդունեց որոշում, համաձայն որի՝ կառավարությանն առաջադրանք է տրվում՝ իրականացնել անհրաժեշտ գործառույթներ՝ հակամարտությունների գոտում խաղաղարար գործողություններն «անհապաղ» վերջ տալու նպատակով: Ընդդիմությունը չմասնակցեց այդ նիստին՝ հայտարարելով, որ այդ որոշումը, միևնույն է, չի իրականացվելու: Ընդդիմադիրները գտնում են, թե նախ պիտի դուրս գալ ԱՊՀ կազմից:

Որոշումն ուժի մեջ կմտնի միայն նախագահի կողմից հաստատվելուց հետո: Սահակաշվիլին հայտարարում է, թե կանդրադառնա այդ հարցին միայն Վ.Պուտինի հետ հանդիպելուց հետո: Ակնհայտ է, որ առաջիկա օրերին կողմերը կփորձեն մեղմել իրադրությունը: Ամեն դեպքում, Պուտինի հետ հավանական հանդիպումից առաջ Սահակաշվիլու դիրքերն այնքան ուժեղ չեն, որքան ինքը նախատեսում էր «Մեծ ութնյակի» գագաթաժողովից առաջ:

***Ռուբեն Սաֆրաստյան
«Նորավանք» հիմնադրամ***

ԱՇԽԱՐՀԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Նախորդ դարի վերջերին ազգային անվտանգության ոլորտի ամերիկյան փորձագետները շրջանառության մեջ դրեցին «աշխարհատնտեսություն» եզրը՝ դրա տակ նկատի ունենալով աշխարհաքաղաքական նպատակներին տնտեսական միջոցներով հասնելու գաղափարը: Նման մոտեցումն, անշուշտ, նորություն չէր. տնտեսական գործոնի նշանակությունը մշտապես կարևորվել է անցյալի բոլոր ստրատեգիաների կողմից, իսկ բրիտանացիները վերջին աշխարհամարտի տարիներին անգամ ստեղծել էին տնտեսական պատերազմի նախարարություն: Սակայն պետք է ընդունել, որ ամերիկացիները կարողացան համակարգել նախկինում եղած պատկերացումները և, ինչն ամենագլխավորն է, աշխարհատնտեսական մոտեցումները դարձրին, այսպես կոչված, ռեալ քաղաքականության անքակտելի մաս: Միաժամանակ, ռազմավարական խնդիրներ լուծելիս՝ տնտեսական տեխնոլոգիաները լայնորեն կիրառել սկսեցին նաև ԱՄՆ մրցակիցները:

Նավթը և դոլարը

ԱՄՆ տնտեսական հզորության ամենաշոշափելի արտահայտություններից է դոլարի գերակայությունն այլ տարադրամների հանդեպ: Ինչպես հայտնի է, 2-րդ աշխարհամարտից հետո, 1945թ. Բրեթոն-Վուդում կնքված համաձայնագրերի հիման վրա ամերիկյան դոլարն այլ երկրների կառավարությունների համար դարձավ ոսկով կոնվերտացվող և այդպիսով վերածվեց համաշխարհային ռեզերվային արտարժույթի: Սակայն երբ 70-ականների սկզբին որոշ երկրներ պահանջեցին իրենց ունեցած դոլարները վերածել ոսկու (այդ պահին աշխարհում արդեն կուտակվել էին դոլարի զգալի պաշարներ), ապա ամերիկյան կառավարությունը հրաժարվեց դա անել և իր պարտավորությունների հանդեպ դեֆոլտ հայտարարեց: Այդպիսով դոլարի նկատմամբ ԱՄՆ-ը որևէ պարտավորություն չունի, սակայն շնորհիվ ամերիկյան ռազմաքաղաքական գերակայության, դոլարը մնաց որպես համաշխարհային ռեզերվային արտարժույթ:

Դոլարի գերակայությունը, ի թիվս այլ գործոնների, մեծապես պայմանավորված է նրանով, որ ածխաջրածնային վառելիքի հետ կապված գործարքները կատարվում են Նյու Յորքի ապրանքային, Լոնդոնի Միջազգային նավթային (մասամբ նաև Մինգապուրի, Տոկիոյի) բորսաներում ու միմիայն դոլարով: Նման պայմանները ստիպում են նավթ ներկրող երկրներին այդ բորսաներում գործարքներ կատարելու համար կուտակել դոլարային ակտիվներ և դրանով իսկ ամրապնդել ԱՄՆ տնտեսությունը: Վերահսկելով գոյություն ունեցող նավթային բորսաները՝ ԱՄՆ-ը ի վիճակի է իրագործել գնային այն քաղաքականությունը, որը համընկնում է իր սեփական շահերին: Համաձայն տնտեսագետ-փորձագետների, այս ամենը հանգեցնում է հետևյալ իրավիճակի. տարածելով և ողջ աշխարհին պարտադրելով օգտագործել ամերիկյան պետության կողմից չապահովված և արժեզրկվող դոլարը՝ ԱՄՆ-ը փաստորեն այլ երկրներից ապրանքները գնում է ավելի էժան գնով, քան դրանք իրականում արժեն: Նման երևույթը երբեմն համեմատում են անուղղակի հարկերի հետ, որոնք ԱՄՆ-ը հավաքում է այլ երկրներից:

Մինչև վերջերս վերոհիշյալ կանոնները խախտելու փորձերն անգլո-ամերիկացիները կարողացել են կանխել կոշտ մեթոդներով: Օրինակ, համաձայն մի վարկածի, Իրաքի վրա ԱՄՆ-ի հարձակման պատճառներից է եղել այն, որ Սադամ Հուսեյնը, «Նավթ պարենի դիմաց» ծրագրի սահմաններում, փորձելով խուսափել արժեզրկվող դոլարից, նավթի մի մասը որոշել էր վաճառել ոչ թե դոլարով, այլ եվրոյով (գործարքն արժեցել է մոտ \$10 մլրդ):

Սակայն այսօր տեղի է ունենում ամերիկյան մենատիրության աստիճանական նվազում, որն ընթանում է նաև արտարժույթի ոլորտում: Շահալի համագործակցության կազմակերպության հզորացման, ԱՄՆ ռազմաքաղաքական հայտնի կորուստների և հատկապես Իրաքում կրած անհաջողությունների հետևանքով Ամերիկայի ամենակարողության պատրանքը մասամբ վերացել է: Այսօր նավթի համաշխարհային պաշարների մոտ 10%-ին տիրապետող Իրանը և Ռուսաստանը (չնայած այդ երկրում, ընդհանուր առմամբ, գտնվում է աշխարհի օգտակար հանածոների մոտ 30%-ը, սակայն մինչև վերջերս դրանց միջազգային գնագոյացման

գործում Ռուսաստանն էական դերակատարում չուներ) արդեն իսկ բացել են բորսաներ, որտեղ գործարքները կատարվում են ոչ թե դոլարով, այլ համապատասխանաբար՝ եվրոյով և ռուբլով: Վենեսուելայի նախագահ Նուրո Չավեսը, իր հերթին, հայտարարել է, որ իր երկրում նույնպես ստեղծվելու է նավթային բորսա, որտեղ գործարքները կկատարվեն եվրոյով:

«Այլընտրանքային» նավթային բորսաների հայտնվելը նոր երևույթ է և արտացոլում է այն սուր պայքարը, որն ընթանում է ԱՄՆ-ի և «մնացյալ աշխարհի» միջև: Նշենք նաև, որ նավթային խոշոր պաշարներ չունեցող Չինաստանը նույնպես «պայքարում» է դոլարի դեմ. նա իր հսկայական արտարժույթային պաշարների մոտ 45%-ն արդեն վերածել է եվրոյի, իսկ յուանի՝ 10%-ը, ինչն էապես նպաստում է դոլարի հեղինակության անկմանը:

Թեհրանի նախաձեռնությունը

